22	Վանքի գմբէթի գագաթի համար պատրաստած մի մեծադիր երկաթեայ Խաչն ըստ գրութեան Գերապատիւ Թադէոս Արքեպիսկոպոսի՝ երկայնութեամբ $2^1/_2$ արշին տակի խնձորի վերեւից սկսած, և լայնութեամբ հաւասար նմին. նուիրել են Բագուաբնակ մեքենագործ Գերմանացի Փէրդինանդ Զէյց և եղբօր որդի նորա Էրնէստ Զէյց, ըստ գրութեան վերջնոյն առ Թադէոս Արքեպիսկոպոս, ի 29 մայիսի 1835 ամի (Տես գործ Առաջնորդարանի 1878 թ. հմ. 13. թերթ 18 և 19։)	

Իսկ թէ Բագուեցիք որքան տուրք և նուէրք առանձինն տան, ճարեն, հատուցանեն զանազան անձանց և հաստատութեանց. Ստուած գիտէ, որ և ունի վարձատրել զԲագուէցիս յայտնապէս,

Ցիրաւի Շամախւոյ թեմը Ռուսաստանի Հայոց ամեն թեմերէն փոքրն է, ունենալով 47 գիւղ Հայաբնակ և 4 քաղաք, որ է մի գործակալութեան սահման, և ոչ իսկ մի յաջորդութիւն, զի Աղէքսանդրապօլու յաջորդութիւնն պարունակէ 150 գիւղ, Նախջեւանոյն 88 գիւղ, և Տաթեւին 120 գիւղ. բայց Շամախւոյ թեմը զԲագուն ունենալով քաղաք՝ լրացնում է Առաջնորդութեան և յաջորդութեան թերութիւնը։ Եւ որպէս զի՝ ցանկացողն և ընթերցողն լաւ ծանօթանայ Շամախւոյ թեմի մեր ազգայնոց բարոյական և նիւթական դրութիւնն՝ որոց եօթը տարի հոգեւոր Տեսչութեան, Առաջնորդութեան պաշտօնը վարեցի, (1887 յունիս—1894 յուլիս) աշխատեցի ժողովրդոց այցելութեանս միջոցին (1888 և 1890 և 1893) մի առ մի նկարագրել, ինչ որ գիւղերումն և քաղաքներումն լսում, տեսնում և իմանում էինք, այն է՝ թէ եկեղեցիքը և գիւղերի դրութիւնն, և թէ ժողովրդոց թիւը, գործը, կենցաղավարութեան չափն ու եղանակը, վարք ու բարքն ու սովորութիւնն, եւայլն։

Ինչպէս յառաջաբանի մէջ գրել եմ, և յերես 138, ցուցակագրել Շամախւոյ գիւղերի և այլոց տների թիւը և բնակչաց երկուց սեռից որքանութիւնը, և նոցա ունեցած եկեղեցիքը, դպրոցներն և ուսանողներն և բաւականացել եմ գիւղերի մանրամասն ստորագրութեան մասին՝ միայն այն ցուցակովն. այնպէս և այժմ կրկնեմ, թէ հարկ չեմ համարում Շա-